



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆԿԱՐՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՆԻՆ



Էրջերս Սովետական Հայաստանի Պատկերասրանը Բովսարեստից ստացավ շորս արժեքավոր նկարներ: Այդ նկարներից առաջնը, որը ներկացնում է «Հովհանների Երկրպագույունը Ենոածին մանուկ Հիսուսին», մեծաղիր նկար է, պատկանում է 16-րդ դարի Վենետիկյան դպրոցի խոշոր ներկայացուցիչ, խոալացի նշանավոր նկարիչ Յակոպո դա Պոնտե Բասանի (1510—1598 թ. թ.) վրձինին և ուղարկվել է որպես նվեր ուսմինահայ թեմական խորհրդի կողմից: Մնացած երեք նկարները, որոնցից առաջինը՝ «Տաճարի ներքին տեսարան»՝ գործ ֆլամանդական նկարիչ Պիեր Նեեֆսի (1570—1651 թ. թ.), երկրորդը՝ «Անտառը» պեյզաժը, գործ՝ ծագումով իսպանացի, ֆրանսիական նկարիչ Դիազ դը լա Պենայի (1807—1876 թ. թ.) և երրորդը՝ ընտանեկան մի տեսարան, գործ՝ 19-րդ դարի ֆրանսիական անհայտ նկարչի, որպես նվեր ուղարկվել են Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ և արվեստի հայտնի քըննադատ Գրիգոր Զամբաքչյանի կողմից:

Ցակովոր դա Պոնտե Բասանի «Հովհանների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին» մեծաղիր և շափազանց արժեքավոր նկարը, որը մինչև վերջին տարիներս «Հայ մշակութիւն» տանը թանգարանի բաժնում էր ցուցադրված, 1928 թվականին որպես նվեր էր ստացվել Բովսարեստի «Հայ մշակութիւն» նախորդ հիմնարկության՝ «Ռումինանահայ կեդրոնական մատենաբարանի» կողմից: Նվիրատում Սովորավիայի Ֆրլտիշին քաղաքում ապրող ռումինահայ հին հայկական Թագու (Tatos) ընտանիքի անդամ օրիորդ Զինկա թագուն էր, որը նվիրելուց

հազիվ մի տարի անց, 1929 թվականին վախճանվեց¹: Այդ նկարը նրա մոտ մնացել էր իր պապերից²:

1. „Ararat“, 1929, № 55, București.

2. Թագոս ընտանիքը մեկն էր Մողավիայի Հայկական հագույն ընտանիքներից, որոնց համար ավանդում է, որ Անի քաղաքարից պետք է որ զաղթած լինեն Սկզբում Թագոս կամ Թուղուրովիլ ընտանիքը հիշվում է Ֆրլտիշինից ոչ շատ հեռու գտնվող Մողավիայի Ռուման քաղաքարից, և ուր հայերը գենես վաղ ժամանակներից եկած ու հաստատված էին մեծ թվով: Մեր ձեռքի տակ գտնվող մի շարք աղյուսակներից երեսն է, որ 1828 թվականի փետրվարի 28-ին Յասիից (Յաշ) Մողավիայի իշխան Յան Սանդու Սատուրան, հատուկ իշխանական գրավ Ռումանում Բոգդան Թագոսին կամ Թուղուրովիշին առանձնաշնորհումներ է տալիս, ազտեսով մի շարք հարկերից: Փաստաթղթից երեսն է, որ Թագոսը նախապես ստացել էր գնդապետի գինչվորական աստիճանը, 1856 թվականի հունիսի 28-ին Գրիգոր Գիշկա իշխանը նրան ազատում է ֆինանսական տուրքերից: Թագոսը ընտանիքի մեզ հայտնի եղան համառա ճյուղագրությունից երեսն է, որ այդ ընտանիքը խնամքական կապեր էր հաստատել Միսիր, Կապրի, Պրուկու, Զատիկի, Գոլզավ, Բութկիս, Քեսիմ և այլ սամբինահայ հին քննանիքների ճեմ (այս „Ioan Neculce“, 1926—1927, Յաշ):

Թագոս ընտանիքից հատկապես անմոռանակի մի անոնք թողեց Ֆրլտիշին քաղաքի բժշկապետ գոկտ: Գաբրիել Թագոսը (1879—1927 թ. թ.), որը նվիրատուի եղբայրն էր, Գաբրիել Թագոսը իր նախական ուսումը ստացել էր Յասսիի հայազգի Խաչերես Գարագաչի նշանավոր գպրոցում, ուր սովորում էր նաև այլ ազգերի պատկանող աշակերտներ, որոնցից շատերը հետագայում ամենաբարձր պաշտոնների արժանացան: Այստեղ ռումիներենի, ֆրանսերենի և գերմաներենի կողքին գասավանդվամ էր նաև հայոց լեզուն: Գաբրիել Թագոս իր սասմը շարունակում է

Գրիգոր Զամբաքյանը, որը նվիրել է վերաբերյալ նկարներից երեքը, վաղուց է որ ծանոթ է ոռոմինական շրջանակներում որպես արվեստի քննադատ: Գրիգոր Զամբաքյանի գրչին են պատկանում մի շարք աշխատություններ, որոնք վերաբերում են մասմաս ֆրանսիական և հայկապես ոռոմինական նշանավոր նկարիչների գործերին,

«Պալատի» (1945 թ.), «Պետրաշկու» (1945 թ.), «Ն. Գրիգորեսկու» (1946 թ.) և այլն:

Վերոբերյալ առանձին ուսումնասիրություններից դուրս բազմաթիվ են նաև Գրիգոր Զամբաքյանի այն հոդվածները, որոնք վերաբերում են Հայ արվեստի պատմությանը: Դրանցից պետք է հիշել՝ «Հայկական գորգերի արվեստը», «Փորա-



Հովհաննեսի երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին

(Փարծ՝ իտալացի նկարիչ Յակոպո Ռաֆայել Բասանի)

որոնցից են՝ Ալբրի Ֆրանսիացի նկարիչները (ցուցահանդեսի կատալոգ, 1935 թ., ֆրանսիական լեզվով), «Արվեստի էջեր» (1934 թ.), ոռոմինական նշանավոր նկարիչների շարքից՝

Յասիփով, իսկ Բուխարեստում ավարտում բժշկական ֆակուլտետը, որտեղից մեկնում է Փարիզ՝ է՛լ ավելի կատարելագործվելու համար: Տարիների փորձնական անխոնց աշխատանքով գրավում է Ֆրանսիան հիվանդանոցի գմանավոր բժշկապետի պաշտոն ու առժանանում բոլորի գնահատանքին, („Curentul Fălticean“, 1937, № 13—14): Նրա վայելած ժողովրդականությամբ համարվում է ամենեղ, որ նրա վաղաժամ մաճը և թաղումը վեր է ածվում ողջ նահանգի բնակչության սրբի օրի: տասկ հազարից ավելի մարդիկ ուղղվում են նրա աճյունը մինչև գերեզմանատում, իրենց հարգանքությամբ առաջ կանգնեցնում է Գարրիել Թադոսի կիսանդրին („Gurentul Fălticean“, 1939, № 73): Թագու լնատանիթից էր նաև Ժենիկ Թադոսը, որ մի ժամանակ եղել է Ֆրանսիանի բազարապետ և Շենքա կուլտուրալայի նախագահ: մի ուրիշը՝ Թեոդոր Թադոսը, ծանոթ է որպես հրապարակագիր և այլն:

գրությունը հայ տպագրության մեջ, «Մոլոդավայի Հայկական եկեղեցիներում գտնվող հին հայկական վարագույրները», «Հայկական ճարտարապետության ոգին», «Հայ-


ալս տիպար մարդուն Նրա մաճից գեռ տարիներ հնում ժողովուրդը, լմունանալով նրա հիշատակը, գլուզացիության և բնակչության բոլոր խավերի կողմից հավաքված լուսաներով, բժշկապետի մաճից 12 տարի անց, 1939 թվականին, իր երեսնի գլուզագործ հիվանդանոցի առջև կանգնեցնում է Գարրիել Թադոսի կիսանդրին („Gurentul Fălticean“, 1939, № 73): Թագու լնատանիթից էր նաև Ժենիկ Թադոսը, որ մի ժամանակ եղել է Ֆրանսիանի բազարապետ և Շենքա կուլտուրալայի նախագահ: մի ուրիշը՝ Թեոդոր Թադոսը, ծանոթ է որպես հրապարակագիր և այլն:

կական ճարտարապետությունը և Արևմուտքը, «Եղոնարդո դա Վինչիի ճանապարհորդությունը Հայաստանում», «Արգար Պալթաղար որպես նկարիչ և արվեստի քննադատ» և այլն:

Բազմաթիվ նն նաև Զամբաքչյանի գանազան առիթներով կարդացած զեկուցումները, որոնցից են. «Մումինական խոշորագույն բանաստեղծ Մ. Էմինենսկովի, ոսմինացի հոչակավոր նկարիչ Ն. Գրիգորիսկովի, ոսմինացի նկարիչ Պետրաշկովի, ֆրանսիական նկարիչ Ֆրան Գոնարի, ֆրանսիական նկարիչ Օգյուստ Ռենուարի մասին, «Կուտուրայի կազմը ոսմինական և հայկական ժողովուրդների միջև» և այլն¹:

Արվեստի վաստակավոր գործիչ և Սովետական Հայուստանի արվեստի հայտնի տեսարան Դրամբանի հետ ունեցած մեր տեսակցության ժամանակ, Բուլարեստից ստացված վերոհիշյալ չորս նկարների մասին նա մեզ բարեհանձնեց հաղորդել հետևյալը.

«Առաջին նկարը, որն ամենից մեծն ու արժեքավորն է՝ «Հովիվների երկրպագությունը նորածին մանուկ Հիսուսին», հայտնի Վենետիկյան դպրոցի 16-րդ դարի նկարիչ Յակոպո Բասանի գործն է: Բասանը ժամանակակից է Տիցիանի և Տեսորիտի և նրա արվեստը շատ բնորոշ է Վենետիկյան դպրոցի համար: Եթե այդ շրջանում Ֆլորենցիայից



Տաճարի ներքին տեսարան

(Կարձ՝ ֆլամանդական նկարիչ Պիեր Նեեփսի)

1. Գրիգոր Զամբաքչյանը առաջին նախագահը եղավ Բուլարեստի «Հայ մշակութի սան» (1944 թ.): Նա իր նկարների ճոխ հավաքածուն, մեծ մասամբ ոսմինացի նկարիչների գործեր, իր սեփական բնակարանի հետ միասին նվիրեց ոսմինական պետությանը: Նվիրատվությունը ստորագրելու օրը Գ. Զամբաքչյանի բնակարանում ներկա գտնվեցին նաև Ռումինական ժողովրդական Ռևոլուցիոնայի Ազգային մեծ ժողովի նախագահ գոկտ. Պետրոս Կրոսան և կառավարական մի շարք անդամներ: Ռումինական ժողովրդական Ռևոլուցիոնայի Մինիստրների Սովետը Զամբաքչյանի բնակարանը իր իրերով վերածեց «Զամբաքչյան թանգարանի և վերանվանեց «Զամբաքչյան թանգա-

րան», իսկ թանգարանի փողոցն էլ վերանվանվեց «Զամբաքչյան թանգարանի փողոց»: Գրիգոր Զամբաքչյանը, որպես արվեստի պատմության լավագույն գիտակներից, սրանից հետո էլ շարունակում է մեծ նուանդով իր օգտաշատ գործը: Մենք հաճախ ականատես ենք եղել Գ. Զամբաքչյանի խանդական և նրա աճաշակ բացատրություններին՝ յուրաքանչյուր անգամ երբ ոսմինացի կամ հայ ուսանողությունը և կամ արվեստասեր հասարակությունը այցելել են իր թանգարանը: Գ. Զամբաքչյանը զուգընթաց շարունակում է նաև իր դիտու-հետազոտական աշխատանքները: Ռումինական ժողովրդական Ռևոլուցիոնայի Գիտությունների ակադեմիան, հարգելով հա-

լում և Խտավիայի մի շարք քաղաքներում արվեստը անկում էր ապրում, ընդհակառակ Վենետիկում այն ծաղկում էր. իսկ Բասանը հենց այդ Վենետիկյան դպրոցի դեմքերից էր: Նրա նկարների կոլորիտը չերմ է: Մեզ մոտ Հայաստանի Պատկերասրահում եվրոպական նկարների բաժինը բավականին հարուստ է. բայց իտալականը և հատկապես վերոհիշյալ շրջանը այնքան ճոխ չէ. այժմ Բասանի նկարը կլինի այդ շրջանի գլուխգործոցը: Այդ մի նկարը առանձին իսկ վերցրած, իր էռովիամբ տալիս է Վենետիկյան դպրոցի ամբողջական տպավորությունը:

«Ենչ վերաբերում է Գրիգոր Զամբաքչյանի նվիրած նկարներին, ամենից առաջ պետք է նշել նեեփսի, ֆլամանդական 17-րդ դարի այդ նկարչի բավականին մեծ նկարը, որը ներկայացնում է մի եկեղեցու ներքին տեսարանը: Նեեփսի հայտնի է որպես եկեղեցիների ներքին տեսարանների նկարիչ. Փաստորեն իր գծած եկեղեցիները չկան, այլ ինքն է ստեղծում, այն էլ շատ մանրամասն կերպով և մտցնում է ֆիգուրաներ և այլն: Մյուս նկարը՝ դա 19-րդ դարի ֆրանսիական նկարիչ Դիազի գործն է. Դիազը ֆրանսիական Բարբիզոնյան դպրոցի ղեկավարներից էր: Այդ դպրոցի ղեկավարը համարվում է Բենոյոր Ռուան, բայց Դիազն էլ կարևոր տեղ է գրավում: Նկարը ներկայացնում է պեյզաժ անտառում՝ մութ կոլորիտով: Վերջին նկարը 19-րդ դարի 60—70-ական թվականների ֆրանսիական անհայտ նկարչի գործ է: Նկարի բովանդակությունը վերցված է 18-րդ դարից: Ժանրային նկար է:»

«Ուշագրավ է, որ այս երրորդ անգամն է, որ Գր. Զամբաքչյանը արժեքավոր նկարները

յազդի արվեստի բննադատի արժանիքները, նրան ընտրեց ակադեմիայի թղթակից-անդամ: Գրիգոր Զամբաքչյանը միևնուն ժամանակ չի մտանում նաև իր նվիրները ուղարկել Սովետական Հայաստանի պատկերասրահն և արդեն երրորդ անգամն է,

է նվիրում Սովետական Հայաստանի Պատկերասրահն: Նրա նախորդ ուղարկածները և շատ արժեքավոր գործեր էին. օրինակ՝ նկարիչ Բուտենի գործերից միայն մեկ հատկա Սովետական, իսկ երկրորդը արդեն երեվանում գտնվածն է: Նույնպես նախորդ ուղարկածներից՝ Սովետեցվածի գործը հետաքրքիր է նրանով, որ այդ նկարչի գործերից այժմ միայն երեք հատ են գտնվում ամբողջ Սովետական Միությունում. մեկը՝ Սովետականը, երկրորդը՝ Սարատովում և երրորդը՝ Երևանում:

Հայաստանի Պատկերասրահի դիրեկտոր Պարսամյանը մեզ ասաց, որ Պատկերասրահը ունի հավաքածու նկարների, ինչպես հայկական և ուսական, այնպես էլ արևմտա-եվրոպական նշանավոր նկարիչների գործերից և ստացված սույն նոր նվիրները նպաստում են Պատկերասրահի արևմտա-եվրոպական բաժնի էլ ավելի ճոխացմանը. մի բաժին, որը մեծ հեռանկարներ ունի և մեծ կարևորություն է ընձեռված նրա ճոխացման համար:

Մենք կարծում ենք, որ արտասահմանան առաջավոր հայ արվեստագիտները և արվեստական հասարակությունը կատարելով իրենց հայրենասիրական պարտքը, իրենց ուղարկած նորանոր արժեքավոր նվիրներով անունի հետզհետե սատարեն Սովետական Հայաստանի Պետական Պատկերասրահի էլ ավելի ճոխացմանը:

Վերջերս տեղեկացանք, որ ամերիկահայ նկարիչ Հարություն Տիրիթը, կատարելով իր հայրենասիրական պարտքը, Սովետական Հայաստանի Պետական Պատկերասրահն է կտակել իր տասը լավագույն նկարները:

որ նա նվիրում է արժեքավոր նկարներ: Գ. Զամբաքչյանի նվիրատվություններին հատկացված է Հայաստանի պատկերասրահի մի անկյունը, որը հետզհետե կընդարձակվի և կճոխանա նրա նորանոր նվիրատվությունների միջոցով:

